

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/2

25 օգոստոսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սաշա Սարգսյանի 05.08.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.04.2014 թ-ի թիվ 1425229 վարչական ակտի դեմ:

Ա/Ձ Սաշա Սարգսյանի բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29-րդ բաժնի պետը 2014 թ-ի ապրիլի 15-ին ընդունել է թիվ 1425229 վարչական ակտը, որով տուգանք է նշանակվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով՝ 5.000.000 դրամի չափով, ինչպես նաև գանձման է առաջադրվել 500.000 դրամի չափով պետական տուրքի գումար:

Վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի սխալ կիրառմամբ, ուստի սույնով վարչական կարգով բողոքարկվում է վարչական ակտը՝ ստորև ներկայացվող հիմքերով ու հիմնավորումներով:

Վարչական ակտում, որպես խախտման նկարագրություն նշվում է, որ Ա/Ձ Սաշա Սարգսյանն առանց համապատասխան լիցենզիայի Տավուշի մարզի Աջաջուր համայնքում զբաղվել է գիպսային կավի արդյունահանմամբ և ստացել է 9.150.000 դրամի համախառն եկամուտ: Նշված խախտման մասին հետևությունը հիմնված է նույն օրը՝ ապրիլի 15-ին, կազմված արձանագրությամբ, որում բառացի նշված է նույնը: Արձանագրությամբ նաև նշված է, որ «սույն արձանագրությամբ հարուցվում է վարչական վարույթ»:

Ապրիլի 15-ին վարչական վարույթ հարուցելու պայմաններում պետք է իրականացվեր վարչական վարույթի ընթացիկ փուլը, որի ընթացքում պետք է կատարվեին որոշակի գործողություններ: Մասնավորապես, վարույթի ընթացիկ փուլում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, վարչական մարմինը պարտավոր էր վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այնինչ, առանց այդպիսի հնարավորություն տալու, վարչական մարմինը նույն օրը, փաստորեն արձանագրությունը կազմելու հետ միաժամանակ, ընդունել է նաև վարչական ակտ՝ ավարտելով վարչական վարույթը: Ակնհայտ և կոպիտ կերպով խախտվել է օրենքի վերը նշված պահանջը, հնարավորություն չի տրվել մասնակցել վարչական վարույթում, ներկայացնել ապացույցներ:

Բացի այդ, նշված օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, վարչական մարմինն է կրում վարչական ակտի հիմք հանդիսացող փաստական հանգամանքներն ապացուցելու պարտավորությունը: Մասնավորապես, տվյալ դեպքում վարչական մարմինը պարտավոր էր ապացուցել, որ Աջաջուր համայնքում բողոքաբերը զբաղվել է գիպսային կավի արդյունահանմամբ: Դրա համար գոնե պետք է նշվեր, թե որ հանքավայրն է իբր օգտագործվել առանց համապատասխան լիցենզիայի կամ թույլտվության:

Վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող որևէ հանքավայր, բնական պաշար արդյունահանելու փաստը հաստատող ապացույց գոյություն չունի, ինչը նշանակում է, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի խախտմամբ, ակտն անհիմն է:

Իրականում ակտում նշված՝ Աջաջուր համայնքի տարածքում, և ընդհանրապես, Հայաստանի Հանրապետության տարածքում գիպսային կավ բողոքաբերը երբեք չի արդյունահանել: Այդ փաստը հերքվում է հենց Աջաջուր համայնքի ղեկավարի տված 17.04.2014 թ-ի տեղեկանքով, որով հստակ նշվում է, որ Սաշա Սարգսյանն Աջաջուր համայնքի

վարչական սահմաններում որևէ գործունեություն չի ծավալել, կավի արդյունահանմամբ չի զբաղվել:

Իսկ Ազատամուտ համայնքի ղեկավարի 18.04.2014 թ-ի տեղեկանքով հաստատվում է, որ Սաշա Սարգսյանը 2013 թ-ից գիպսային կավահողը օգտագործել է Ադրբեջանի տարածքից:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս որևէ բնական պաշարի արդյունահանման համար Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից հանքի շահագործման թույլտվություն չի տրվում, և եթե որևէ խախտում է կատարվել, ապա կատարել է Ադրբեջանի տարածքում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՀՀ օրենքների գործողությունը տարածվում է ՀՀ ողջ տարածքի վրա: Հետևաբար, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը կարող է տարածվել միայն այն խախտումների վրա, որոնք կատարվել են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վերոգրյալ հիմքերով ու հիմնավորումներով հաստատվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.04.2014 թ-ի թիվ 1425229 վարչական ակտն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 43-րդ հոդվածների խախտումներով, սխալ է կիրառվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, հետևաբար, առկա են ակտի անվավերության հիմքերը՝ սահմանված նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով:

Ելնելով վերոգրյալից, Ա/Ձ Սաշա Սարգսյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.04.2014 թ-ի թիվ 1425229 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29-րդ բաժնի պետի կողմից 2014 թ-ի ապրիլի 15-ին ընդունվել է թիվ 1425229 վարչական ակտը, որում մասնավորապես նշվել է, որ Ա/Ձ Սաշա Սարգսյանն առանց համապատասխան լիցենզիայի Տավուշի մարզի Աչաջուր համայնքում զբաղվել է գիպսային կավի արդյունահանմամբ և ստացել է 9.150.000 դրամ համախառն եկամուտ: Արդյունքում վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ ընդամենը 5.500.000 դրամի չափով:

Նշվեց նաև, որ հարկային մարմին երրորդ անձից (ՀՀ ԱԱԾ) տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Ա/Ձ Սաշա Սարգսյանի կողմից Տավուշի մարզի Աչաջուր համայնքի տարածքում իրականացվում է գիպսային կավի արդյունահանման և իրացման գործունեություն:

Ելնելով վերոգրյալից՝ միջնորդություն է ներկայացվել ՕՀՎ պետին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ: Արդյունքում, ՕՀՎ պետի կողմից ընդունվել է որոշում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ: Օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ՕՀՎ 29-րդ բաժնի աշխատակիցները համոզվել են Ա/Ձ Սաշա Սարգսյանի կողմից Տավուշի մարզի Աչաջուր համայնքում գիպսային կավի արդյունահանման և իրացման գործունեություն իրականացնելու մեջ:

Բողոքում բերված պնդումները, որ խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Ա/Ձ Սաշա Սարգսյանին հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննվող փաստական հանգամանքների վերաբերյալ, հիմնավոր չեն: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Ա/Ձ Սաշա Սարգսյանը 14.04.2014 թ-ին ՕՀՎ 29-րդ բաժնի աշխատակիցներին տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ 2013 թ-ի ընթացքում իր կողմից

Ազատամուտի վարչական տարածքից արդյունահանվել է 305 մեքենա («Կրազ» մակնիշի) գիպսային կավ և յուրաքանչյուր մեքենայի տարողությունը կազմել է 10 տոննա:

Ըստ հայտարարության, մեկ մեքենայի բեռը Ա/Ձ Սաշա Սարգսյանը վաճառել է 30.000 դրամով տարբեր տնտեսավարողների՝ Ա/Ձ Կարեն Օքմինյանին, Ա/Ձ Հրայր Օհանյանին: Հայտարարությունում Ա/Ձ Սաշա Սարգսյանը նշել է նաև, որ նշված գործունեության իրականացման համար չունի համապատասխան լիցենզիա, իսկ աշխատանքներն իրականացրել է իր սեփական «Կրազ 256 Բ1» մակնիշի 57SL599 պետհամարանիշի բեռնատարով: Հայտարարությունը գրված է Ա/Ձ Սաշա Սարգսյանի ձեռքով, իր բառերից, որի համար նա ստորագրել է:

Իր հերթին, ՕՀՎ 29-րդ բաժնի աշխատակիցների կողմից գրավոր բացատրություններ են վերցվել Ա/Ձ Կարեն Օքմինյանից և Ա/Ձ Հրայր Օհանյանից: Այսպես, Ա/Ձ Կարեն Օքմինյանն իր 03.04.2014 թ-ի բացատրությունում մասնավորապես նշել է, որ 2004 թ-ից զբաղվել է գաջի արտադրությամբ, որի մեջ օգտագործվում է գիպսային կավ: Բացատրությունում Ա/Ձ Կարեն Օքմինյանը նշել է նաև, որ 2013 թ-ի ընթացքում Սաշա Սարգսյանն իր «Կրազ» մակնիշի 57SL599 պետհամարանիշի բեռնատարով մատակարարել է 5 մեքենա գիպսային կավ, որի դիմաց յուրաքանչյուր մեքենայի համար վճարել է 30.000 դրամ: Ընդ որում, մատակարարված ապրանքի դիմաց Սաշա Սարգսյանի կողմից որևէ փաստաթուղթ չի տրամադրվել: Բացատրությունը գրված է Ա/Ձ Կարեն Օքմինյանի ձեռքով, իր բառերից, որի համար նա ստորագրել է:

Ա/Ձ Հրայր Օհանյանն իր 01.04.2014 թ-ի բացատրությունում մասնավորապես նշել է, որ 2009 թ-ից գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր և հաշվառված է Իջևանի ՏՀՏ-ում:

Ա/Ձ Հրայր Օհանյանը նշել է նաև, որ զբաղվում է շինանյութի (գաջի) արտադրությամբ: Ըստ բացատրության, Սաշա Սարգսյանը հումքը Ա/Ձ Հրայր Օհանյանի արտադրամաս է բերել «Կրազ» մակնիշի 57SL599 պետհամարանիշի մեքենայով: 2013 թ-ի ընթացքում Սաշա Սարգսյանը մատակարարել է մոտ 100 մեքենա հումք և յուրաքանչյուր մեքենայի համար Ա/Ձ Հրայր Օհանյանը կանխիկ վճարել է 30.000 դրամ: Մատակարարված հումքի դիմաց Սաշա Սարգսյանի կողմից որևէ փաստաթուղթ չի տրամադրվել: Բացատրությունը գրված է Ա/Ձ Հրայր Օհանյանի ձեռքով, իր բառերից, որի համար վերջինս ստորագրել է:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են Ա/Ձ Սաշա Սարգսյանի կողմից առանց համապատասխան լիցենզիայի Տավուշի մարզի տարածքում գիպսային կավի արդյունահանմամբ և իրացմամբ զբաղվելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.04.2014 թ-ի թիվ 1425229 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ 05.08.2014 թ-ի բողոքը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ